



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի ՆԻՍԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու **49** անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Կ.Արեյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մակարյանը, աշխատակազմի քարտուղարի տեղակալ Ս. Մերթարջյանը, Երևանի քաղաքապետի խորհրդական Գ.Բաղդասարյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա.Գևորգյանը:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Կ.Արեյանը ներկայացրեց **2018** թվականի հուլիսի **12**-ի «Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ Երևանի քաղաքապետի լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին» **N1** արձանագրությունը՝

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի **2018** թվականի հուլիսի **9**-ի հրաժարականը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի **45**-րդ հոդվածի **2**-րդ մասի **3**-րդ կետով և **4**-րդ մասով՝ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ Երևանի քաղաքապետի լիազորությունները համարել վաղաժամկետ դադարած **2018** թվականի հուլիսի **9**-ից:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Կ.Արեյանը առաջարկեց **2018** թվականի հուլիսի **12**-ի «Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ Երևանի քաղաքապետի լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին» **N1** արձանագրությունն ընդունել ի գիտություն:

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի հրաժարականը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի **45**-րդ հոդվածի **2**-րդ մասի **3**-րդ կետով և **46**-րդ հոդվածի **1**-ին մասով՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, քաղաքապետի պաշտոնակատար Կ.Արեյանը ներկայացրեց Երևանի ավագանու **2018** թվականի հուլիսի **12**-ի նիստի օրակարգը՝ Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրության օրը սահմանելու մասին:

Նախքան օրակարգային հարցին անդրադառնալը, Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Կ.Արեյանը ներկայացրեց ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը, որն ընդունվեց ի գիտություն:

1. Հասմիկ Մարգարյան-Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

2. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

3. Մարինա Խաչատրյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Նախքան օրակարգային հարցին անդրադառնալը՝ հարց ուղղեց ավագանու **1** անդամ.

1. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Կ.Արեյանը:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար Դ. Խաժակյանը:

Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության կողմից ներկայացվեց առաջարկություն՝ Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրության օրը սահմանել **2018** թվականի օգոստոսի **8**-ին, ժամը **11.00**-ին:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը **10.57**-ին:

Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

1. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Կ.Արեյանն առաջարկեց քվեարկել Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրության օրը **2018** թվականի հուլիսի **16**-ին, ժամը **11.00**-ին սահմանելու մասին և Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրության օրը **2018** թվականի օգոստոսի **8**-ին, ժամը **11.00**-ին սահմանելու մասին առաջարկությունները.

1. Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրության օրը **2018** թվականի հուլիսի **16**-ին, ժամը **11.00**-ին սահմանելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ- Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրության օրը սահմանել **2018** թվականի հուլիսի **16**-ին, ժամը **11.00**-ին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու **46** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ-կողմ-**34**

դեմ-**11**

ձեռնպահ-**1**

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

2. Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրության օրը **2018** թվականի օգոստոսի **8**-ին, ժամը **11.00**-ին սահմանելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու **50** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ-կողմ-**15**

դեմ-**34**

ձեռնպահ-**1**

Որոշումը չընդունվեց

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

Կ. ԱՐԵՅԱՆ